ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. (+374281) 2 25 22**

«29» «10» 2024թ. **N 01/14-5/6867-2024**

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՆԱԽԱԳԱՀ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 21.10.2024 352-99 հարցման՝ Ձեզ եմ ներկայացնում Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կողմից տնօրինվող/շահագործվող առցանց հարթակի և սոցիալական ցանցի մասին պահանջվող տեղեկատվությունը:

1. Վայոց ձորի մարզպետի աշխատակազմ /պաշտոնական կայք/, հղումը՝ http://vdzor.mtad.am/

2.1 Պաշտոնական կայքը գործարկվել է 2011 թվականին:

2.2 Կայքի թարմացում/վերազինում չի կատարվել: Նոր բաժիններ/ենթաբաժիններ ստեղծվում են՝ ըստ անհրաժեշտության:

2.3 Կայքի բովանդակության ստեղծմամբ զբաղվում են Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության՝ համապատասխան գործառույթները իրականացնող գլխավոր մասնագետը և իրավաբանական բաժնի պետը /վերջինս ստեղծում է միայն համայնքների ղեկավարների որոշումներ, համայնքների ավագանիների որոշումներ ենթաբաժինների բովանդակությունը/:

2.4 Պաշտոնական կայքում ներկայացվող տվյալները կարող են ավելացնել կամ փոփոխել Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության՝

համապատասխան գործառույթներն իրականացնող գլխավոր մասնագետը և իրավաբանական բաժնի պետը:

3. Վայոց ձորի մարզպետի աշխատակազմը Faebook սոցիալական ցանցում ունի 2 էջ՝ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմ, հղումը՝ https://www.facebook.com/VayotsDzoriMarzpetiAshkhatakazm/ և Կոլյա Միքաելյան/ Kolya Mikaelyan, հղումը՝ https://www.facebook.com/profile.php?id=61554721931883 :

4.1 Սոցիալական ցանցերի բովանդակության ստեղծմամբ զբաղվում է Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության համապատասխան գործառույթներ իրականացնող գլխավոր մասնագետը:

4.2 Սոցիալական ցանցերում ներկայացվող տեղեկություններն անհրաժեշտության դեպքում կարող է ավելացնել կամ փոփոխել Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության՝ համապատասխան գործառույթներն իրականացնող գլխավոր մասնագետը:

4.3 Սոցիալական ցանցի էջերն ունեն 1 ադմինիստրատոր:

4.4.Մարզպետը կամ մարզպետի տեղակալներն ընդգրկված չեն էջի ադմինիստրատորների ցանկում:

5. Վայոց ձորի մարզպետի աշխատակազմը չի օգտվում սոցիալական ցանցերում վճարովի գովազդի ծառայություններից:

2024-10-29 16:05:49 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հարգանքով՝ **Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ**

Կատարող՝ Է.Սարգսյան
ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի
անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության
և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ
Հեռ: 093 19 10 91